դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ բազային տուրքի 50-ապատիկի չափով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում է բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանը, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ, 191-192-րդ, 234.12-րդ հոդվածներով,

Վ Ճ Ռ Ե Ց

«ԱՄԱԶՈՆ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի՝ ի դեմս լիազոր ներկայացուցիչ Աննա Ավետիսյանի, հայցն ընդդեմ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «ԱՄԱԶՈՆ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր՝ Ա.Գ.Մալխասյանի 30.11.2023թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել «ԱՄԱԶՈՆ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր՝ Ա.Գ.Մալխասյանի 30.11.2023թ. որոշումը:

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամից հօգուտ «ԱՄԱԶՈՆ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար և 50.000 ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:

Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ ԱՎԱԳ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ